# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Մովսես Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   «Հայկական Ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-ՀԱԷԿ-ի տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Ավստրիա, քաղաք Վիեննա, մայիսի 27-ից 31-ը, 2024 թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Ավստրիա (Ատոմային Էներգիայի Միջուկային Գործակալություն)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն 2024թ. մայիսի 27-ից 31-ը ԱԷՄԳ-ի կողմից կազմակերպվող «Ատոմային էլեկտրակայանների պայմանագրերի կազմման (կնքման) բնութագրերի վերաբերյալ» միջտարածաշրջանային վերապատրաստման դասընթացին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Վերապատրաստման դասընթացին մասնակցում էին մասնագետներ տարբեր երկրներից, ովքեր ներգրավված են միջուկային էներգիայի ծրագրերի իրականացման և կառավարման գործընթացներում: Հիմնական նպատակն էր մասնակցողներին ապահովել հմտություններով և գիտելիքներով, որոնք անհրաժեշտ են ատոմային էլեկտրակայանների պայմանագրերի մշակման, գնահատման և կնքման համար:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Մասնակիցներին բացման խոսքով ողջունելուց և հանդիպումը պաշտոնապես բացելուց հետո համակարգողները (Դուտա Ռայ և Ջենիֆեր Մակդոնալդ) ներկայացրեցին հանդիպման նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև հնգօրյա այցից հետո ակնկալվող արդյունքները: Առաջին և հաջորդող օրերի ընթացքում օրակարգի համաձայն ներկայացվում էին պրեզենտացիաներ, տեղի էին ունենում խմբային հանդիպումներ, այնուհետև՝ քննարկումներ:
   Առաջին օրը մասնակիցները և համակարգող Դուտա Ռայը քննարկեցին նախքան ԱԷԿ-ների պայմանագրերի կազզման փուլը սկսելը, մի շարք կարևոր, նախնական քայլեր, որոնք պետք է իրականացվեն, որպեսզի նախագծի համար ամուր հիմք ապահովվի: Այդ քայլերը ներառում են իրագործելիության ուսումնասիրություններ (իրականացնել համապարփակ ուսումնասիրություններ՝ գնահատելու նախագծի տեխնիկական,տնտեսական և ֆինանսական իրագործելիությունը), կարգավորող թույլտվություններ (ստանալ անհրաժեշտ թույլտվություններ և հավանություններ ազգային և միջազգային կարգավորող մարմիններից, համոզվել միջուկային անվտանգության ստանդարտների և իրավական պահանջների

համապատասխանության մեջ), ֆինանսավորում (ստեղծել մանրամասն ֆինանսական պլան, ներառյալ ծախսերի գնահատումներ և ֆինանսավորման աղբյուրներ), շահագրգիռ կողմերի ներգրավում և ռիսկերի կառավարում:
Երկրորդ օրը իրենց զեկույցներով հանդես եկան Ռութ Սմիթը (Միջազգային միջուկային երաշխիքների վարչության տնօրենի տեղակալ) «Երաշխիքների նկատառումները ռեակտորային նախագծերի համար» թեմայով և Ջերեմի Ուայթլոքը (ԱԷՄԳ-ի ավագ տեխնիկական խորհրդատու)՝ «Ժամանակակից ռեակտորների/Փոքր մոդուլային ռեակտորների հետ կապված երաշխիքների ապահովման խնդիրները և առկա ռեսուրսները» թեմայով:
Երրորդ և չորրորդ օրերին լսվել են մի շարք զեկույցներ, որոնք վերաբերում էին միջուկային անվտանգությանը՝ հատկապես ԱԷՄԳ-ի դերը միջուկային անվտանգության ապահովման գործում, միջուկային անվտանգության նկատառումները փոքր մոդուլային ռեակտորի համար, ինչպես նաև ատոմային էլեկտրակայանների համար համակարգչային անվտանգության կարգավորող պահանջները և դրույթները: Դուտա Ռայը (ԱԷՄԳ-ի միջուկային ճարտարագետ) հանդես է եկել հետևալ զեկույցներով. «Միջուկային պայմանագրերի գործիքակազմ», «Ատոմային էլեկտրակայանների գնումների գործընթացի կառավարում» և «Պայմանագրերի կառավարում»:
Գործուղման վերջին օրը եղան զեկույցներ, որոնք վերաբերում էին նոր ատոմակայանների կառուցման ֆինանսավորման մոտեցումներին, ատոմակայանների պայմանագրային և ֆինանսական ասպեկտներին, պայմանագրային պայմանավորվածություններին, ինչպես նաև նոր ռեակտորային տեխնոլոգիաների վերաբերյալ առաջարկների գնահատման չափանիշներին:

## 8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Դասընթացի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան քննարկել գործնական խնդիրները և առաջացած հարցերը, փոխանակվել փորձառություններով և լավագույն փորձերով, ինչպես նաև կառուցել նոր համագործակցություններ միջուկային էներգետիկայի ոլորտում:
Հանդիպման ավարտին կազմակերպիչների կողմից ընդգծվեց սույն ծրագրի շարունակական լինելու կարևորությունը: Դասընթացի ավարտին մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր և տրամադրվեցին միջոցառումներին վերաբերող նյութեր:

## 9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քննարկումներն ու բանակցություններն ընթացել են բարենպաստ աշխատանքային մթնոլորտում, և բավականին արդյունավետ են եղել այցի նպատակին հասնելու տեսանկյունից:

Հարկ եմ համարում ընդգծել, որ համատեղ աշխատանքը, փոխադարձ աջակցությունը, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը բավականին օգտակար կլինեն մեր ծրագրերի, հեռանկարների իրականացման և կատարելագործման համար:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի
առաջին տեղակալ- ՀԱԷԿ-ի տնօրեն

Մ. Վարդանյան